Հաստատված է՝
«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի
ազգային համալսարան» հիմնադրամի Գիտական
խորհրդի 2026 թվականի հունիսի 24-ի որոշմամբ
արձանագրություն № 01-06/26
Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
Մ.Գ. Բարսեղյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամում ուսման վճարի փոխհատուցման մասին կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրագույն կրթության և գիտության մասին», «Պետական նպաստների մասին», «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանը, Համալսարանի կանոնադրությունը և այլ իրավական ակտերը:

2. Սույն կանոնակարգը սահմանում է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) համապատասխան (առկա, հեռակա և հեռավար) ուսուցման ձևերով բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների (այսուհետ՝ ուսանող) ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ) հատկացնելու, չափերը, պայմանները, հիմքերը, դիմումների ներկայացման և քննարկման ընթացակարգը, փոխհատուցման դադարեցման, փոփոխման կամ վերականգնման կարգը:

3. Ուսանողական նպաստը ուսանողի ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցումն է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված

միջոցների, Համալսարանի միջոցների, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

4. Սույն կանոնակարգով նախատեսված փոխհատուցումները տրամադրվում են թափանցիկության, հավասարության, խտրականության բացառման, բարձր առաջադիմության խրախուսման, սոցիալական աջակցության և ներառականության սկզբունքների պահպանմամբ:

5. Ուսման վճարի փոխհատուցման վերաբերյալ դիմումները, փաստաթղթերը և անվանացանկերը ուսումնասիրում է ռեկտորի հրամանով ստեղծվող ուսման վճարների փոխհատուցման հարցերի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

6. Հանձնաժողովի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը (հանձնաժողովի նախագահ), գլխավոր հաշվապահը, կրթության վարչության ղեկավարը, ուսումնական գործընթացների կազմակերպման բաժնի ղեկավարը (հանձնաժողովի քարտուղար), իրավաբանական բաժնի ղեկավարը, համապատասխան ֆակուլտետի դեկանը և ուսանողական խորհրդի նախագահը: Ռեկտորի հրամանով հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել նաև Համալսարանի այլ աշխատողներ՝ առանց հանձնաժողովի պարտադիր կազմի փոփոխման:

7. Հանձնաժողովի նիստն իրավազոր է անդամների առնվազն 2/3-ի (երկու երրորդ) մասնակցության դեպքում, իսկ որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

8. Ուսման վճարի փոխհատուցման չափը հաշվարկվում է հիմք ընդունելով տվյալ ուսանողի հետ կնքված կրթական ծառայությունների մատուցման պայմանագրով տվյալ կրթական ծրագրի համար սահմանված ուսման վճարի չափը: Եթե տվյալ կրթական ծրագրի համար համալսարանի կողմից սահմանված ուսման վճարի չափը հետագայում փոփոխվել է, ապա փոխհատուցման հաշվարկման հիմք է ընդունվում ուսանողի գործող պայմանագրում նշված ուսման վճարի չափը, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով, Կառավարության որոշմամբ կամ կողմերի միջև կնքված պայմանագրի փոփոխությամբ նախատեսված է այլ կարգ կամ չափ:

9. Համալսարանը, սեփական միջոցների հաշվին, ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում է տրամադրում վճարովի համակարգում սովորող ուսանողների առնվազն 10 (տասը) տոկոսին՝ ուսանողների վճարներից ձևավորված բյուջեի առնվազն 5 (հինգ) տոկոսի չափով և սույն կանոնակարգով սահմանված չափանիշներին համապատասխան:

10. Ուսման վճարի փոխհատուցում կարող է տրամադրվել բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով կամ օրենքով, Կառավարության որոշումներով և սույն կանոնակարգով նախատեսված այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին:

11. Ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման (զեղչի) իրավունքից չեն կարող օգտվել այն ուսանողները, որոնք դիմում ներկայացնելու պահին ունեն ակադեմիական պարտք, բացառությամբ ուսումնառությունը դադարեցված և ուսանողական իրավունքները վերականգնած ուսանողների, որոնց դիմումները քննարկվում է անհատական ժամանակացույցով սահմանված ժամկետներում ակադեմիական պարտքը հանձնելուց հետո:

12. Մի քանի հիմքով մասնակի փոխհատուցման հավակնելու դեպքում ուսանողը օգտվում է մեկ՝ առավել բարձր չափով փոխհատուցում նախատեսող հիմքից, եթե տվյալ հիմքը կարգավորող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

13. Համալսարանում մեկից ավելի կրթական ծրագրերով նույն կրթական աստիճանով զուգահեռ ուսումնառելու դեպքում ուսանողին ուսման վճարի փոխհատուցում տրամադրվում է միայն մեկ կրթական ծրագրի համար:

14. Սույն կանոնակարգով ուղղակիորեն չնախատեսված կամ առանձնահատուկ դեպքերում ուսման վճարի փոխհատուցում կարող է տրամադրվել ռեկտորի որոշմամբ սահմանված չափով՝ հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ հաշվի առնելով ուսանողի անձնական, ընտանեկան, սոցիալական, առողջական կամ այլ օբյեկտիվ հանգամանքները, ինչպես նաև Համալսարանի կարիքների համար ուսանողի ներգրավման նպատակահարմարությունը: Սույն կետով սահմանված դեպքում հանձնաժողովին ներկայացվում է գրավոր միջնորդագիր՝ ֆակուլտետի դեկանի, կամ ուսանողական խորհրդի նախագահի կողմից:

15. Համալսարանի միջոցների հաշվին տրամադրվող ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել Համալսարանի կողմից սահմանված միջին որակական գնահատականի (այսուհետ՝ ՄՈԳ) շեմը հաղթահարելու դեպքում:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար միջին որակական գնահատականի (ՄՈԳ-ի) շեմը սահմանվում է Համալսարանի ռեկտորի հրամանով:

16. Առաջին կուրսի ուսանողները Համալսարանի միջոցների հաշվին մասնակի փոխհատուցման կարող են հավակնել երկրորդ կիսամյակից սկսած՝ առաջին կիսամյակի ուսումնառության արդյունքներով:

17. Ուսման վճարի փոխհատուցումը դադարեցվում է ուսանողի հեռացման, ազատման, այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու, կեղծ կամ ոչ հավաստի փաստաթուղթ ներկայացնելու կամ օրենքով և սույն կանոնակարգով նախատեսված այլ դեպքերում:

18. Համալսարանի միջոցների հաշվին ուսման վճարի մասնակի փոխհատուցումն ուսանողին տրամադրվում է մեկ ուսումնական տարվա համար, բացառությամբ սույն կանոնակարգի 40-րդ կետի, որոնց դեպքում ուսման վճարի մասնակի փոխհատուցումն ուսանողին տրամադրվում է մեկ ուսումնական կիսամյակի համար:

2. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ (ՓՈԽԱՏԵՂՈՒՄ)

19. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցվող տեղերի քանակը սահմանվում և բաշխվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ և պետական բյուջեով նախատեսված միջոցների սահմաններում՝ ըստ բուհերի և մասնագիտությունների (կրթական ծրագրերի, ներքին մրցույթով՝ ըստ մասնագիտացումների), որը տեղափոխվում է կուրսից կուրս:

20. Պետությունը նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում (փոխատեղում) տրամադրում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցույթային կարգով, եթե սույն կանոնակարգով այլ բան նախատեսված չէ:

21. Փոխատեղման մրցույթին չեն կարող մասնակցել այն ուսանողները, ովքեր տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 20-ի դրությամբ ունեն ակադեմիական պարտք:

22. Պետությունը նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին համապատասխան՝

1) առաջին կուրսում ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է ընդունելության մրցույթի արդյունքներով պետության կողմից ուսանողական, նպաստների ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ՝ անվճար տեղերում ընդունված ուսանողներին,

2) երկրորդ և հաջորդ կուրսերում լրիվ փոխհատուցումը տրամադրվում է նախորդ մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով: Սույն պարբերության իմաստով՝ «բարձր առաջադիմություն» ունեցող ուսանող է համարվում այն ուսանողը, ով ուսման վճարի լրիվ փոխհատուցման նպաստի մրցույթի առաջին փուլի անցկացման պահին քննաշրջանի արդյունքներով (առանց վերահանձնումների) քննություններից ու ստուգարքներից ունի վերջնական հաշվարկված դրական ամփոփիչ գնահատական, բացառությամբ Համալսարանի իրավական ակտերով սահմանված դեպքերի:

3) ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով հավասար միավորներ ունեցող երկու և ավելի ուսանողների միջև միևնույն պայմանների առկայության դեպքում առավելությունը տրվում է այն ուսանողներին, որոնք ունեն առավել բարձր առաջադիմություն երկրորդ կուրսում՝ առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքներով, հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ այդ արդյունքների հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով: Եթե իրականացված համեմատության արդյունքում ուսանողների առաջադիմության միջին ցուցանիշները ևս հավասար են, ապա

առավելությունը տրվում է այն ուսանողին, որն ընդհանուր մասնագիտական դասընթացների գնահատման արդյունքներով ունի առավել բարձր ընդհանուր միջին միավոր:

23. Պետության կողմից տրամադրվող ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման՝ փոխատեղման մրցույթը հանձնաժողովն անցկացնում է յուրաքանչյուր ուսումնական տարի՝ մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 20-ը: Մրցույթն իրականացվում է նախորդ ուսումնական տարվա երկու կիսամյակների ընթացքում ուսանողի հանձնած քննությունների և ստուգարքների արդյունքների հիման վրա՝ հաշվի առնելով ուսանողի ՄՈԳ-ը: ՄՈԳ-ը հաշվարկվում է Համալսարանում գործող գիտելիքների գնահատման սանդղակին համապատասխան՝ հարյուրերորդականի ճշտությամբ:

24. Ֆակուլտետի կողմից հաստատված փոխատեղման մրցույթի անվանացանկը մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 15-ը ներկայացվում է հանձնաժողովին:

Ֆակուլտետի կողմից ներկայացված անվանացանկերում անճշտություններ, ինչպես նաև մրցույթի ընթացքում թույլ տված ընթացակարգային խախտումներ հայտնաբերելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը վերադարձնում է ֆակուլտետ՝ նոր մրցույթ կազմակերպելու համար:

Հանձնաժողովի կողմից հաստատված մրցույթի նախնական արդյունքները մեկօրյա ժամկետում ուղարկվում են տվյալ կուրսի ուսանողների համալսարանական էլեկտրոնային փոստին: Երեք աշխատանքային օրվա ընթացքում ուսանողն իրավունքի ունի մրցույթի արդյունքների վերաբերյալ բողոք ներկայացնել հանձնաժողովին:

Նշված ժամկետի ավարտից հետո հանձնաժողովը քննարկում է ներկայացված բողոքները (առկայության դեպքում), որից հետո հաստատում է ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների վերջնական անվանացանկերը և հրամանի նախագիծը ներկայացնում է ռեկտորի հաստատմանը: Ուսման վճարի Լրիվ փոխհատուցում (փոխատեղում) տրամադրելու մասին հրամանում նշվում է ուսանողական նպաստի ժամկետը՝ տվյալ տարվա սեպտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա օգոստոսի 31-ը),

25. Սույն կարգի 22-րդ կետի 2-րդ ենթակետերի պահանջները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած ուսանողների վրա՝ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

26. Սույն կարգի 22-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված պահանջները տարածվում են նաև վճարովի համակարգում սովորող՝ Լեռնային Ղարաբաղում և Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում հաշվառված և բնակվող հայազգի ուսանողների, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և

ապաստան ստացած հայազգի ուսանողների, ինչպես նաև այն հայազգի օտարերկրյա ուսանողների նկատմամբ, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ:

27. Ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) պետության կողմից հատկացված նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը միայն քննաշրջանի արդյունքով չլրացվելու դեպքում անցկացվում է մրցույթի երկրորդ փուլ, որին առաջին հերթին մասնակցում են առաջին վերահանձնման արդյունքում դրական առաջադիմություն ապահոված ուսանողները, իսկ այնուհետև երկրորդ վերահանձնման արդյունքում դրական առաջադիմություն ապահոված ուսանողները:

28. Թափուր տեղեր առաջանալու դեպքում նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցումը կարող է տրամադրվել տվյալ մասնագիտության շրջանակում այլ կրթական ծրագրերի ուսանողների՝ սույն կարգի դրույթներին համապատասխան:

29. Ուսումնառությունը դադարեցրած ուսանողը պարտադիր ժամկետային զինվորական ծառայության, առողջական վիճակի, հղիության և ծննդաբերության, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդի կամ ուսանողական փոխանակման ծրագրով ուսումնառության գործուղման դեպքում վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստի իրավունքը՝ պետական բյուջեով նախատեսված ուսանողական նպաստ ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում:

Ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման իրավունքից օգտվող ուսանողի ուսումնառությունը սույն կետով սահմանված պատճառներով ընդհատվելու դեպքում ազատված ուսանողական նպաստը նույն կուրսում տվյալ ընթացիկ ուսումնական տարում չի օգտագործվում և հետագայում ավելացվում է այն կուրսի տվյալ ուսումնական տարվա ուսանողական նպաստների թվին, որում ուսանողը վերականգնում է իր ուսանողական իրավունքները:

30. Ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման իրավունքից հրաժարվելու վերաբերյալ դիմումները ներկայացվում են հանձնաժողովին մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 10-ը:

31. Այլ պատճառներով ուսումնառությունն ընդհատած և վերականգնված, այլ բուհերից, Համալսարանի այլ կրթական ծրագրերից կամ ուսումնառության ձևերից տեղափոխված ուսանողները կարող են մասնակցել պետության կողմից ուսանողական նպաստի լրիվ փոխհատուցման (փոխատեղման) համար անցկացվող մրցութին առնվազն մեկ ուսումնական տարի սովորելուց հետո, իսկ Համալսարանի միջոցների հաշվին ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից՝ առկա և հեռակա ուսումնառության համակարգում մեկ ուսումնական կիսամյակ սովորելուց հետո:

3. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՎ

32. Պետությունը նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է՝

1) օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերին՝

ա) «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձանց, բացառությամբ բակալավրի կրթական ծրագրով ուսումնառող այն ուսանողների, որոնք

ա)[1] զորակոչվելու պահին ունեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձի կարգավիճակ, ծառայության ավարտից հետո մինչև ուսումնառության ավարտը պահպանում են համապատասխան ուսումնական հաստատությունում անվճար հիմունքներով սովորելու հնարավորությունը,

ա)[2] հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող ուսանողները մինչև ուսումնառության ավարտը պահպանում են համապատասխան ուսումնական հաստատությունում անվճար հիմունքներով սովորելու հնարավորությունը:

բ) «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող (ֆունկցիոնալության ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող) և հաշմանդամ երեխա ճանաչված անձանց, ֆունկցիոնալության ծանր և խորը, իսկ երեխաների դեպքում նաև միջին աստիճանի սահմանափակում ունեցող անձանց:

գ) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող, նախկին զինծառայողի կարգավիճակ ունեցող անձանց:

դ) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին, ամուսնուն (կնոջը), մինչև 27 տարեկան զավակներին:

2) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով (կրթական ծրագրերով) նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին, ընդ որում, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով կարող են սահմանվել նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողների ուսման վճարի փոխհատուցման այլ պայմաններ:

33. Պետությունը տրամադրում է ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ և մասնակի փոխհատուցում ըստ առաջադիմության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-19-րդ կետերին համապատասխան, հետևյալ խմբերին.

1) Ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ կամ անապահովության աստիճան ունեցող ուսանողներին,

2) Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ուսանողներին,

3) Մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին,

4) Առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով սովորող՝ երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին:

4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

34. Համալսարանի միջոցներով առաջադիմության հիմքով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրվում է.

1) Ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.05 միավոր տարբերությամբ՝ 70 տոկոսի չափով, մինչև 0.051-0.1 միավոր տարբերությամբ՝ 50 տոկոսի չափով,

2) Ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ ուսումնառող նախորդ ուսումնական տարում երկու կիսամյակ անընդմեջ 18 և բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին 20 տոկոսի չափով:

3) Ուսման վճարի փոխհատուցում 50 տոկոսի չափով տրամադրվում է առկա ուսուցմամբ վճարովի համակարգում ուսումնառող բակալավրի կրթական ծրագրով նախորդ 4 կիսամյակի իսկ մագիստրատուրայի կրթական ծրագրով նախորդ 2 կիսամյակի ուսումնառության ընթացքում 18 և բարձր գնահատականներ ունեցող օտարերկրյա մեկական ուսանողի յուրաքանչյուր կրթական աստիճանում՝ մրցութային հիմունքներով:

5. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԻՄՔԵՐՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

35. Համալսարանի միջոցներով սոցիալական և այլ հիմքերով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրվում է հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին՝

1) «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի՝ անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով (ծայրահեղ կամ չափավոր) ճանաչված ընտանիքի ուսանողներին 30 տոկոսի չափով՝ երկրորդ և հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի 40.00-49.99 տոկոսի դեպքում:

2) «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի՝ անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 160 տոկոսի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով (միջին) ճանաչված ընտանիքի ուսանողներին՝ 20 տոկոսի չափով:

3) Սոցիալապես անապահով՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր և մինչև սահմանային միավոր ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 20 տոկոսի չափով:

4) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան ուսանողներին՝ 50 տոկոսի չափով:

5) Մինչև 23 տարեկան միակողմանի ծնողազուրկ ուսանողներին՝ 50 տոկոսի չափով:

6) Մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ 50 տոկոսի չափով:

7) Երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 30 տոկոսի չափով:

8) 1-ին խմբի հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակում ունեցող կամ 2-րդ խմբի հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակում ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ 30 տոկոսի չափով:

9) Ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում ունեցող կամ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող ուսանողներին՝ 30 տոկոսի չափով:

10) Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում մարտական հերթապահություն իրականացրած կամ մարտական գործողությունների մասնակից ուսանողներին՝ 30 տոկոսի չափով,

11) Ազատամարտիկի կամ մարտական գործողությունների մասնակցի երեխա ուսանողներին՝ 10 տոկոսի չափով:

12) Համալսարանում վճարովի հիմունքներով սովորող, այդ թվում օտարերկրյա, երկու և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 15 տոկոսի չափով:

13) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող բնակավայրերի հանրակրթական դպրոցների ուսուցչի երեխա ուսանողներին 10 տոկոսի չափով:

6. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՐԵԽԱ ԿԱՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

36. Համալսարանում հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատողների, աշխատանքային գործող հարաբերությունների մեջ գտնվող դասախոսների երեխա-ուսանողներին ուսման վճարի փոխհատուցում տրամադրվում է հետևյալ չափով՝

1) 5-9 տարվա աշխատանքային ստաժ ունեցող աշխատողի երեխա ուսանողներին՝ 30 տոկոս,

2) 10-14 տարվա աշխատանքային ստաժ ունեցող աշխատողի երեխա ուսանողներին՝ 40 տոկոս,

3) 15 և ավել տարվա աշխատանքային ստաժ ունեցող աշխատողի երեխա ուսանողներին՝ 50 տոկոս:

37. Համալսարանում հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատող ուսանողներին տրամադրվում է ուսման վճարի 30 տոկոսի փոխհատուցում:

38. Աշխատողի Համալսարանում աշխատանքային ստաժը հաշվարկվում է Համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման ստորաբաժանման տեղեկանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև նախկինում ունեցած ստաժը, եթե աշխատանքային հարաբերությունների ընդհատումը չի հակասում սույն կանոնակարգի նպատակներին և հանձնաժողովի գնահատմամբ չի խախտում հավասարության սկզբունքը:

Աշխատողների Համալսարանում աշխատանքային ստաժը հաշվարկվում է անկախ Համալսարանում նախկինում ստաժի ընդհատման հանգամանքից:

7. ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

39. Պետության և Համալսարանի կողմից ուսման վճարի փոխհատուցման գործընթացների կազմակերպումն ապահովում է Կրթության վարչությունը՝ համապատասխան ֆակուլտետների, իրավաբանական բաժնի, հաշվապահական հաշվառման բաժնի և այլ ստորաբաժանումների մասնակցությամբ:

40. Ուսման վճարի փոխհատուցման մասին ռեկտորին հասցեագրված դիմումները և համապատասխան փաստաթղթերն ուսանողները ներկայացնում են՝

1) առկա ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին հաջորդող չորս շաբաթվա ընթացքում,

2) հեռակա ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող մեկական շաբաթների ընթացքում,

3) սույն կանոնակարգի 31-րդ կետի «ա» ենթակետով սահմանված կարգավիճակ ունեցող ուսանողները մինչև սեպտեմբերի 15-ը:

41. Ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում Համալսարանի միջոցների հաշվին մասնակի փոխհատուցում ստանալու համար կարող են դիմել՝

ա) առաջին կուրսի ուսանողները՝ առաջին կիսամյակի ՄՈԳ-ի արդյունքերի հիման վրա,

բ) առաջին կիսամյակում դիմումը սահմանված ժամկետում չներկայացրած ուսանողները՝ նախորդ ուսումնական տարվա ՄՈԳ-ի արդյունքների հիման վրա,

գ) սույն կանոնակարգով սահմանված կարգավիճակ ձեռք բերած ուսանողները՝ նախորդ ուսումնական տարվա ՄՈԳ-ի արդյունքների հիման վրա:

42. Դիմումում նշվում են ուսանողի անունը, հայրանունը, ազգանունը, ֆակուլտետը, կրթական ծրագիրը, կուրսը, խումբը, ուսումնառության ձևը, սոցիալական կամ այլ կարգավիճակը, դիմումի ներկայացման ամսաթիվը: Դիմումին կցվում են սույն կանոնակարգի 51-րդ կետով պահանջվող փաստաթղթերը, որի ամբողջականությունը ստուգվում է համապատասխան դեկանատի կողմից:

43. Կրթության վարչությունը ստացված փաստաթղթերի, ստորաբաժանումների կարծիքների և հաշվարկների հիման վրա կազմում է ուսման վճարի փոխհատուցման իրավունք ունեցող հավակնորդների (ուսանողների) վերջնական անվանացանկերը և ներկայացնում Հանձնաժողովի քննարկմանը:

44. Հանձնաժողովը յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ քննարկում է փոխհատուցման հիմքը, փաստաթղթերի ամբողջականությունը, առաջադիմության ցուցանիշները, ապա ընդունում է որոշում փոխհատուցման տրամադրման, մերժման, վերադարձման կամ լրացուցիչ ուսումնասիրության մասին:

45. Հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը: Արձանագրությունում նշվում են նիստի օրը, մասնակիցները, քննարկված հարցերը, որոշումները, քվեարկության արդյունքները, առանձին կարծիքները և առաջարկությունները: Արձանագրությունը և ուսման վճարի փոխհատուցման ենթակա ուսանողների անվանացանկը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և նիստին մասնակցած անդամները:

46. Հանձնաժողովի նիստին կարող է մասնակցել ուսանողական նպաստի համար դրամաշնորհ տրամադրող ֆիզիկական անձը կամ կազմակերպության ներկայացուցիչը, իսկ անհրաժեշտության դեպքում կարող են հրավիրվել նաև ուսանողական նպաստի հավակնորդները: Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները պահպանվում են առնվազն հինգ տարի:

47. Ուսման վճարի փոխհատուցման (զեղչ) վերաբերյալ որոշումը ուսանողը կարող է

բողոքարկել հանձնաժողովին, ուսանողի համալսարանական էլեկտրոնային փոստին ուղարկված պաշտոնական ծանուցումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքի քննարկման արդյունքում Հանձնաժողովը կարող է բավարարել բողոքը, փոփոխել որոշումը կամ մերժել այն:

48. Հանձնաժողովի որոշման հիման վրա կրթության վարչությունը կազմում է ուսման վճարի փոխհատուցման վերաբերյալ ռեկտորի հրամանի նախագիծը, որում նշվում է մասնակի փոխհատուցման չափը կամ տոկոսը և կիրառման ժամանակահատվածը:

49. Ուսանողի սոցիալական, ակադեմիական կամ իրավական կարգավիճակի փոփոխության դեպքում փոխհատուցման չափը կարող է փոփոխվել հանձնաժողովի եզրակացության և ռեկտորի հրամանի հիման վրա:

50. Համալսարանը պետական միջոցներով տրամադրվող փոխհատուցումների վերաբերյալ ամփոփ տվյալները սահմանված ձևով և ժամկետներում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

8. ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

51. Սույն կանոնակարգով նախատեսված փոխհատուցումներին հավակնելու դեպքում ուսանողը սույն կանոնակարգով սահմանված ժամկետներում ներկայացնում է դիմում ռեկտորի անունով, անձը հաստատող փաստաթուղթ, ՄՈԳ-ի վերաբերյալ տեղեկանք՝ ֆակուլտետի դեկանատից, ինչպես նաև ուսման վճարի փոխհատուցման յուրաքանչյուր կարգավիճակին համապատասխանող հետևյալ փաստաթղթերը.

1. Առանց ծնողական խնամքի մնացած (երկկողմանի ծնողազուրկ) ուսանողները՝

ա) առանց ծնողական խնամքի մնացած լինելու կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց խմբին պատկանելու փաստը հավաստող փաստաթղթեր՝ ծնողների մահացած կամ ծնողական իրավունքներից զրկված, անգործունակ ճանաչված լինելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից խուսափելու վերաբերյալ դատական ակտ կամ տեղեկանք, կամ վկայական կամ այլ հավաստող փաստաթուղթ,

բ) ուսանողի ծննդյան վկայական:

2. 1-ին և 2-րդ խմբի (ֆունկցիոնալության ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող) հաշմանդամ կամ հաշմանդամ երեխա ուսանողները՝

ա) 1-ին և 2-րդ խմբի (ֆունկցիոնալության ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող) հաշմանդամության կարգը հաստատող տեղեկանք:

3. 1-ին կամ 2-րդ խմբի (ֆունկցիոնալության ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ, ծնող ունեցող ուսանողները՝

ա) ծնող(ներ)ի հաշմանդամության կարգը կամ հաշմանդամ ազատամարտիկ հանդիսանալու փաստը հավաստող փաստաթղթի, այդ թվում՝ Հայաստանի

Հանրապետության պաշտպանության նախարարության կամ այլ լիազոր պետական մարմնի կողմից տրամադրված համապատասխան տեղեկանքի բնօրինակը և պատճենը,

բ) ծնող(ներ)ի անձը հաստատող փաստաթուղթ,

գ) ուսանողի ծննդյան վկայական:

4. 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության հիմքով զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անձ՝

ա) հաշմանդամություն ունենալու փաստը հավաստող համապատասխան փաստաթուղթ,

բ) հաշմանդամության կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինվորական լինելու փաստը հավաստող փաստաթուղթ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կամ այլ լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանք,

գ) այլ հավաստող փաստաթուղթ:

5. Զոհված (մահացած) զինծառայողի ծնող կամ ամուսին (կին), կամ մինչև 27 տարեկան զավակ ուսանողները՝

ա) զոհված (մահացած) զինծառայող լինելու փաստը հավաստող փաստաթուղթ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից տրված համապատասխան տեղեկանքի կամ համապատասխան փաստը հաստատող օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, մահվան վկայականը,

բ) հետևյալ փաստաթղթերից մեկը.

-զոհված (մահացած) զինծառայողի ծնող լինելու դեպքում՝ զոհված (մահացած) զինծառայող զավակի ծննդյան վկայականը, կամ

-զոհված (մահացած) զինծառայողի ամուսին (կին) լինելու դեպքում՝ զոհված (մահացած) զինծառայողի և դիմում ներկայացնող անձի ամուսնության վկայականը, կամ

-զոհված (մահացած) զինծառայողի զավակ լինելու դեպքում՝ ծննդյան վկայականը, կամ հայրության ճանաչման մասին տեղեկանքը, կամ օրինական ուժի մեջ մտած և ծնող–զավակ կապը հավաստող դատական ակտը:

6. Ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ կամ անապահովության աստիճան ունեցող ուսանողները՝

ա) ընտանիքի անապահովության միավորի կամ աստիճանի վերաբերյալ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից տրված տեղեկանք:

7. Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ուսանողները՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն որոշման ***N 1 հավելվածում*** ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքների բնակավայրերերից մեկում հաշվառված լինելու փաստը հավաստող տեղեկանք,

բ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն որոշման ***N 1 հավելվածում*** ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքների բնակավայրերերից մեկում վերջին 5 (հինգ) տարում (այդ թվում ընդհանուր հանրագումարով) մշտապես բնակվելու փաստը հավաստող տեղեկանք,

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն որոշման թիվ 1–ին հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքների բնակավայրերերից մեկում հանրակրթական (միջնակարգ կամ ավագ դպրոց), նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն/ներն ավարտած լինելու փաստը հաստատող ատեստատը:

8. *Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում մարտական հերթապահություն իրականացրած կամ մարտական գործողությունների մասնակից ուսանողները՝*

ա) մարտական հերթապահություն իրականացրած կամ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակի մասին հավաստող փաստաթուղթ՝ զինգրքույկ, որում կատարված է համապատասխան գրառում կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից տրված մարտական գործողություններին մասնակցի կամ մարտական հերթապահություն իրականացրած կարգավիճակի մասին տեղեկանք:

9. *Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերով սովորող՝ երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողները՝*

ա) երեխաների ծննդյան վկայականները:

10. 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան ուսանողները՝

ա) 18 (տասնութ) տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած լինելու կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց խմբին պատկանելու փաստը հավաստող փաստաթղթեր՝ ծնողների մահացած կամ ծնողական իրավունքներից զրկված, անգործունակ ճանաչված լինելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից խուսափելու վերաբերյալ դատական ակտ կամ տեղեկանք, վկայական կամ այլ փաստաթուղթ

բ) ուսանողի ծննդյան վկայականը:

11. մինչև 23 տարեկան միակողմանի ծնողազուրկ ուսանողները՝

ա) ծնողազուրկ (միածնող) անձանց խմբին պատկանելու փաստը հավաստող փաստաթուղթ՝ ծնողի մահացած կամ ծնողական իրավունքներից զրկված, անգործունակ ճանաչված լինելու վերաբերյալ դատական ակտի կամ տեղեկանքի, վկայականի կամ այլ հավաստող փաստաթուղթ,

բ) ուսանողի ծննդյան վկայականը:

12. մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողները՝

ա) մինչև մեկ տարեկան երեխայի ծննդյան վկայականը:

13. երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող

ընտանիքների ուսանողները՝

ա) երեխաների կամ ուսանողների ծննդյան վկայականները,

բ) տեղեկանք համապատասխան բուհից մյուս երեխաների սովորելու մասին,

14. Ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում ունեցող կամ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող ուսանողները՝

ա) հաշմանդամության կարգը հաստատող տեղեկանք:

15. Ազատամարտիկի կամ մարտական գործողությունների մասնակցի երեխա ուսանողները՝

ա) Ազատամարտիկի կամ մարտական գործողությունների մասնակից ծնողի կարգավիճակը հավաստող փաստաթուղթ, պետական մարմնի կողմից տրված:

16. Համալսարանում վճարովի հիմունքներով սովորող, այդ թվում օտարերկրյա, երկու և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողները՝

ա) համալսարանում վճարովի հիմունքներով սովորելու վերաբերյալ տեղեկանք,

բ) ուսանողների ծննդյան վկայականները,

17. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող բնակավայրերի հանրակրթական դպրոցների ուսուցչի երեխա ուսանողները՝

ա) սոցիալական աջակցություն ստացող համայնքների բնակավայրերի հանրակրթական դպրոցի ուսուցիչ հանդիսանալու վերաբերյալ տեղեկանք,

բ) ծնողի անձը հաստատող փաստաթուղթ,

գ) ուսանողի ծննդյան վկայական:

18. Նախորդ ուսումնական տարում Համալսարանի կողմից կազմակերպված միջոցառումներում կամ նախաձեռնություններում առնվազն 20 ժամ կամավորական աշխատանք կատարած և Համալսարանի կողմից վավերացված համապատասխան փաստաթուղթ ունեցող ուսանողները՝

ա) համալսարանի կողմից վավերացված համապատասխան փաստաթուղթ՝ 20 ժամ կամավորական աշխատանք կատարելու վերաբերյալ:

19. Համալսարանում հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատողների երեխա-ուսանողներ՝

ա) համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման ստորաբաժանման կողմից տրված տեղեկանք՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ,

բ) ծնողի անձը հաստատող փաստաթուղթ,

գ) ուսանողի ծննդյան վկայական:

20. Համալսարանում հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատող ուսանողները՝

ա) համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման ստորաբաժանման կողմից տրված տեղեկանք՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ:

52. Փաստաթղթերը կարող են ներկայացվել բնօրինակների, պատճենների կամ լուսածրված տարբերակով՝ ելնելով դիմումների ներկայացման եղանակից: Բնօրինակները վերադարձվում են ուսանողին՝ պատճենների համապատասխանությունը ստուգելուց հետո:

Համալսարանը մշակում և պահպանում է անձնական տվյալները միայն փոխհատուցման տրամադրման նպատակով և օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

53. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատման օրվան հաջորդող օրվանից:

54. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

55. Սույն կանոնակարգով չկարգավորված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով:

56. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած է ճանաչվում Համալսարանի գիտական խորհրդի 2021 թվականի հունիսի 29-ի թիվ 01-06/21 որոշմամբ հաստատված «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ուսանողներին Համալսարանի միջոցների հաշվին կրթաթոշակ տրամադրելու և ուսման վճարը փոխհատուցելու մասին կարգը:

Գիտական քարտուղար՝ Լ. Հ. Լևոնյան

24 հունիսի 2026թ.
Գիտական խորհրդի որոշում՝ N 01-06/26